## ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀՌՑ-ՄԱԱՇՁԲ-06/21
### ՏՐԱՆՍՖՈՐՄԱՏՈՐԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅԱՆԻ ՏՐԱՆՍՖՈՐՄԱՏՈՐԻ ՄԱԼՈՒԽԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԵՎ ՄՈՆՏԱԺՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ

ք. Երևան 03 05 2021թ.

«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերությունն, ի դեմս գլխավոր տնօրեն Մ. Միլիտոնյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ Պատվիրատու, մի կողմից, և <<Էներգոնազ>> ՍՊ ընկերությունն, ի դեմս տնօրեն Ռ. Նազարյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ Կատարող, մյուս կողմից, համատեղ հիշատակման դեպքում՝ Կողմեր, կնքեցին սույն Պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է տրանսֆորմատորային ենթակայանի տրանսֆորմատորի մալուխի վերանորոգման և մոնտաժման աշխատանքների կատարման պարտավորությունը, այսուհետ՝ Աշխատանք, համաձայն սույն պայմանագրի՝ այսուհետ՝ Պայմանագիր, անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է Պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Աշխատանք.

ա) Չընդունել Աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Աշխատանքը Պայմանագրին համապատասխանող Աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու Պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու Պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է Պայմանագիրը: Կատարողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված Աշխատանքը չի համապատասխանում Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին պահանջներին,

բ) խախտվել է Աշխատանքի կատարման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված Աշխատանքի արդյունքը, իսկ Աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից Պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև Պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել Պայմանագրի 5.2 և 5.3 կետերու նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքու լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնե Պատվիրատուին:

### 3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Աշխատանքի արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվու է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև Պայմանագրով Աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ /հավելված N 3/:

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե կատարված Աշխատանքը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա/ հարցի կարգավորման համար ձեռնարկվում են նման իրավիճակի համար Պայմանագրո նախատեսված միջոցները,

բ/ Կատարողի նկատմամբ կիրառվում են Պայմանագրով նախատեսված պատասխանատվությա միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4. Եթե Պատվիրատուն Պայմանագրի 3.3. կետով սահմանված ժամկետում չի ընդունու Պայմանագրի արդյունքը կամ մերժում, ապա այն համարվում է ընդունված և Պայմանագրի 3.3. կետո սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

### 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1 Պայմանագրով Աշխատանքի գինը կազմում է 290 000 (երկու հարյուր,իննիսուն հազար) Հ դրամ: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված Աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ Պայմանագրի վճարմա ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին:

### 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Աշխատանքի կատարման՝ Պայմանագր պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի չհամապատասխանող Աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև Աշխատանքը Պայմանագրով սահմանվա ժամկետում կատարելու, սակայն Պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքու Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարմա ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոս չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում է հաշվանցվում են Աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հեւ

5.5 Պատվիրատուի կողմից Պայմանագրով նախատեսված ժամկետի խախտման դեպքո Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդակա տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում Հ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց Պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով և Պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների Աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս Կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած՝ Կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ Պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց Կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում, Պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող Աշխատանքի միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.5 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև Պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել Աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան Պայմանագրով ի սկզբանե Աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան Պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.6 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.7 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

7.8 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, Պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.9 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.10 Պայմանագիրը կազմված է 7 /յոթ/ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն Պայմանագրի N 1, N 2, N 3 հավելվածները հանդիսանում են Պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ:

7.11 Սույն Պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
| --- | --- |
| ՀՀ, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95 | ՀՀ, Կոտայքի մարզ. գ. Նոր Գեղի |
| «Ամերիաբանկ» ՓԲԸ | <<Կոնվերսբանկ>> ՓԲԸ, Նոր Հաճն մ.ճ. |
| h/h 1570027609970100 | h/h՝ 1930006838240100 |
| ՀՎՀՀ 01501898 | ՀՎՀՀ՝ 03309022 |
| ------------------------------------ | ------------------------------------ |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

Հավելված N 1
03 05 2021թ. կնքված
ՀՀՌՑ-ՄԱԱՇՁԲ-06/21 ծածկագրով պայմանագրի

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

| Աշխատանքի | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| չ/հ | Տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | կատարման | | |
| | | | | | | հասցեն | Ժամկետը | |
| | | | | | | | սկիզբ | ավար |
| 1 | Տրանսֆորմատորային ենթակայանի տրանսֆորմատորի մալուխի վերանորոգման և մոնտաժման աշխատանք | հատ | 1 | 290 000 | 1 | ՀՀ, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95 | Պայմանագրի հաստատման օրվանից | 20 օրացուց օր |

| հ/հ | Անվանում | Չափման միավոր | Քանակ | Միավորի արժեք (ՀՀ դրամ) | Գումար (ՀՀ դրամ) |
|---|---|---|---|---|---|
| 1 | Մալուխ ԱՄԲ 3*70 | մ | 15 | 6000 | 90000 |
| 2 | Մալուխի փռում | մ | 15 | 1400 | 11000 |
| 3 | Ջերմանստեցվող ծայրային կցորդիչ 3ՍՏՊ 25/70 | հատ | 2 | 42000 | 84000 |
| 4 | Ջերմանստեցվող ծայրային կցորդիչի տեղադրում | հատ | 2 | 25000 | 50000 |
| 5 | Հին մալուխի ապամոնտաժում | | | | 15000 |
| 5 | Լաբարատոր ստուգում և արձանագրության տրամադրում | | | | 40000 |
| | Ընդհանուր | | | | 290 000 /երկու հարյուր,իննիսուն հազար/ |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95
«Ամերիաբանկ» ՓԲԸ
հ/հ 1570027609970100
ՀՎՀՀ 01501898

/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

ՀՀ, Կոտայքի մարզ. գ. Նոր Գեղի
<<Կոնվերսբանկ>> ՓԲԸ, Նոր Հաճն մ.ճ.
հ/հ՝ 1930006838240100
ՀՎՀՀ՝ 03309022

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
__03__ __05__ 2021թ. կնքված
ՀՀՌՑ-ՄԱԱՇՁԲ-06/21 ծածկագրով պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ

դրամ

| | Աշխատանքի | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների* | | | | | | | | | | | | |
| չ/հ | անվանումը | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | Տրանսֆորմատորային ենթակայանի տրանսֆորմատորի մալուխի վերանորոգման և մոնտաժման աշխատանք | - | - | - | - | 290 000 | 290 000 | 290 000 | 290 000 | 290 000 | 290 000 | 290 000 | 290 000 | 290 000 |

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95
«Ամերիաբանկ» ՓԲԸ
հ/հ 1570027609970100
ՀՎՀՀ 01501898

/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

ՀՀ, Կոտայքի մարզ. գ. Նոր Գեղի
<<Կոնվերսբանկ>> ՓԲԸ, Նոր Հաճն մ.ճ.
հ/հ՝ 1930006838240100
ՀՎՀՀ՝ 03309022

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 3
03 05 2021թ. կնքված
ՀՀՌՑ-ՄԱԱՇՁԲ-06/21 ծածկագրով պայմանագրի

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| ____________________ | ____________________ |
| ____________________ | ____________________ |
| գտնվելու վայրը ____________ | գտնվելու վայրը ____________ |
| հհ ____________ | հհ ____________ |
| հվհհ ____________ | հվհհ ____________ |

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
# ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ` Պայմանագիր/ անվանումը` ________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը` «____» «____________________» 20 թ.

Պայմանագրի համարը` ___________ Պատվիրատուն և Պայմանագրի կողմը` հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ աշխատանքը`

| N | Կատարած աշխատանքների | | | | | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | | |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Աշխատանքը հանձնեց | Աշխատանքն ընդունեց |
|---|---|
| ____________________ | ____________________ |
| ստորագրություն | ստորագրություն |
| Նազարյան Ռաֆիկ | ____________________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

## ՏՐԱՆՍՖՈՐՄԱՏՈՐԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅԱՆԻ ՏՐԱՆՍՖՈՐՄԱՏՈՐԻ ՄԱԼՈՒԽԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԵՎ ՄՈՆՏԱԺՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ N ՀՀՌՑ-ՄԱԱՇՁԲ-06/21 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 21 մայիսի 2021 թ.

«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերությունն, ի դեմս գլխավոր տնօրեն Մ. Միլիտոնյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ Պատվիրատու, մի կողմից, և <<Էներգոնագ>> ՍՊ ընկերությունն, ի դեմս տնօրեն Ռ. Նազարյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ Կատարող, մյուս կողմից, համատեղ հիշատակման դեպքում Կողմեր, կնքեցին սույն համաձայնագիրը, այսուհետ՝ «Համաձայնագիր», հետևյալի մասին.

Հիմք ընդունելով 21.05.2021թ. թիվ 28-21-442/1 զեկուցագիրը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 56-րդ կետով, ինչպես նաև 03.05.2021թ. կնքված թիվ **ՀՀՌՑ-ՄԱԱՇ21ՁԲ-06/21** պայմանագրի, այսուհետ՝ «Պայմանագիր», 7.4 կետով, Պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները.

1. «Պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 200 000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

1.1 Պայմանագրի Հավելված N1-ը փոխարինել Հավելված N1/1-ով:

1.2 Պայմանագրի Հավելված N2-ը, փոխարինել Հավելված N2/1-ով:

Հավելված N1/1-ը և Հավելված N2/1 համարվում են Համաձայնագրի բաղկացուցիչ մասը:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

2.2 Համաձայնագրում չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները, այդ թվում Ծառայության հանձնման-ընդունման հետ կապված և այլ հարաբերությունները թողնել անփոփոխ:

2.3 Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է Համաձայնագրի մեկ օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95
«Ամերիաբանկ» ՓԲԸ
h/h 1570027609970100
ՀՎՀՀ 01501898

---------------------------------
/ստորագրություն/
Կ Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

ՀՀ, Կոտայքի մարզ. գ. Նոր Գեղի
<<Կոնվերսբանկ>> ՓԲԸ, Նոր Հաճն մ.ճ.
h/h՝ 1930006838240100
ՀՎՀՀ՝ 03309022

---------------------------------
/ստորագրություն/
Կ Տ

*Հավելված N1/1*
*21 մայիսի 2021 թ. կնքված*
*թիվ 1 համաձայնագրի*

*03 մայիսի 2021 թ. կնքված*
*թիվ ՀՀՌՑ-ՄԱԱՇՁԲ-06/21 պայմանագրի*

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

| Աշխատանքի | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| չ/հ | Տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | կատարման | | |
| | | | | | | հասցեն | Ժամկետը | |
| | | | | | | | սկիզբ | ավարտ |
| 1 | Տրանսֆորմատորային ենթակայանի տրանսֆորմատորի մալուխի վերանորոգման և մոնտաժման աշխատանք | հատ | 1 | 200 000 | 1 | ՀՀ, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95 | Պայմանագրի հաստատման օրվանից | 20 օրացուցային օր |

| հ/հ | Անվանում | Չափման միավոր | Քանակ | Միավորի արժեք (ՀՀ դրամ) | Գումար (ՀՀ դրամ) |
|---|---|---|---|---|---|
| 1 | Մալուխի փռում | մ | 15 | 733,33 | 11000. |
| 2 | Ջերմանստեցվող ծայրային կցորդիչ 3ՍՏՊ 25/70 | հատ | 2 | 42000 | 84000 |
| 3 | Ջերմանստեցվող ծայրային կցորդիչի տեղադրում | հատ | 2 | 25000 | 50000 |
| 4 | Հին մալուխի ապամոնտաժում | | | | 15000 |
| 5 | Լաբարատոր ստուգում և արձանագրության տրամադրում | | | | 40000 |
| | Ընդհանուր | | | | 200 000<br>Երկու հարյուր հազար |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95
«Ամերիաբանկ» ՓԲԸ
հ/հ 1570027609970100
ՀՎՀՀ՝ 01501898

/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

ՀՀ, Կոտայքի մարզ. գ. Նոր Գեղի
<<Կոնվերսբանկ>> ՓԲԸ, Նոր Հաճն մ.ճ.
հ/հ՝ 1930006838240100
ՀՎՀՀ՝ 03309022

/ստորագրություն/
Կ.Տ

*Հավելված N1/1*
*21 մայիսի 2021 թ. կնքված*
*թիվ 1 համաձայնագրի*

*03 մայիսի 2021 թ. կնքված*
*թիվ ՀՀՌՑ-ՄԱԱՇՁԲ-06/21 պայմանագրի*

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| | | Աշխատանքի | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների* | | | | | | | | | | | | |
| չ/հ | անվանումը | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | Տրանսֆորմատորային ենթակայանի տրանսֆորմատորի մալուխի վերանորոգման և մոնտաժման աշխատանք | - | - | - | - | 200 000 | 200 000 | 200 000 | 200 000 | 200 000 | 200 000 | 200 000 | 200 000 | 200 000 |

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95
«Ամերիաբանկ» ՓԲԸ
h/h 1570027609970100
ՀՎՀՀ՝ 01501898

/ստորագրություն/
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

ՀՀ, Կոտայքի մարզ. գ. Նոր Գեղի
<<Կոնվերսբանկ>> ՓԲԸ, Նոր Հաճն մ.ճ.
h/h՝ 1930006838240100
ՀՎՀՀ՝ 03309022

/ստորագրություն/
Կ.Տ.

*Հավելված N 3*
*3 մայիսի 2021թ. կնքված*
*թիվ ՀՀՌՑ-ՄԱՍՇՁԲ-06/21 պայմանագրի*

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| «Էներգոնազ» ՍՊ ընկերություն<br>ՀՀ, Կոտայքի մարզ. գ. Նոր Գեղի<br>հհ 1930006838240100<br>հվհհ 03309022 | «ՀՀՌՑ» ՓԲ ընկերություն<br>ՀՀ, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95<br>հհ 1570027609970100<br>հվհհ 01501898 |

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*24 մայիսի 2021թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ **ՏՐԱՆՍՖՈՐՄԱՏՈՐԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅԱՆԻ ՏՐԱՆՍՖՈՐՄԱՏՈՐԻ ՄԱԼՈՒԽԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԵՎ ՄՈՆՏԱԺՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ**
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ 03 մայիսի 2021 թ.
Պայմանագրի համարը՝ **N ՀՀՌՑ-ՄԱՍՇՁԲ-06/21**
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ 26 մայիսի 2021 թ. դուրս գրված N _Բ1679917351___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ աշխատանքը՝

| N | Կատարած աշխատանքների | | | | | Վճարման ենթակա գումարը /հազ. դրամ/ | Վճարման ժամկետը |
|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | | |
| | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| 1 | Մալուխի փռում | 15 մ | 15 մ | 24.05.2021 | 24.05.2021 | 11.000 | Մինչև 03.06.2021 |
| 2 | Ջերմանստեցվող ծայրային կցորդիչ 3ՄՏՊ 25/70 | 2 հատ | 2 հատ | 24.05.2021 | 24.05.2021 | 84.000 | |
| 3 | Ջերմանստեցվող ծայրային կցորդիչի տեղադրում | 2 հատ | 2 հատ | 24.05.2021 | 24.05.2021 | 50.000 | |
| 4 | Հին մալուխի ապամոնտաժում | | | 24.05.2021 | 24.05.2021 | 15.000 | |
| 5 | Լաբարատոր ստուգում և արձանագրության տրամադրում | | | 24.05.2021 | 24.05.2021 | 40.000 | |
| | Ընդհանուր | | | | | 200.000 | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Աշխատանքը հանձնեց | Աշխատանքն ընդունեց |
|---|---|
| ստորագրություն | ստորագրություն |
| Նազարյան Ռաֆիկ | Գևորգյան Արիստակես |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

# Հաշիվ վավերագիր
(ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)

| [1] Դուրս գրման ամսաթիվ | | | [2] Սերիա | [3] Համար |
|---|---|---|---|---|
| 26 | Մայիս | 2021 թ. | Բ | 1679917351 |
| [4] Մատուցման ամսաթիվը | | | | |
| 3 | Մայիս | 2021 թ. | | |

| Ճշգրտվող հաշիվ վավերագրի | |
|---|---|
| Սերիա | Համար |
| | |
| Ճշգրտվող հաշիվ վավերագրի դուրս գրման ամսաթիվ | |
| | |

| Պայմանագիր | [5] Կնքման ամսաթիվ | [6] Համար |
|---|---|---|
| | 3 Մայիս, 2021 թ. | ՀՀՌՑ-ՄԱԱՇՁԲ-06?21 |

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

## Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի

| | |
|---|---|
| [8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) | 0 3 3 0 9 0 2 2 |
| [9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | |
| [10] Անվանումը | ԷՆԵՐԳՈՆԱՁ Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ) |
| [11] Բանկային տվյալները | <<Կոնվերս Բանկ>> ՓԲԸ Նոր Հաճն մ/ճ — N 1930006838240100 |
| [12] Գտնվելու վայրը (հասցեն) | ԿՈՏԱՅՔ ՆՈՐ ԳԵՂԻ չկա - |
| [13] Լրացուցիչ տվյալներ | Սույն հաշիվը գրվել է Բ6841299311 հաշվի փոխարեն համաձայն ՀՕ 56-րդ հոդվածի 10-րդ կետի |

## Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի

| | |
|---|---|
| [14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը) | 0 1 5 0 1 8 9 8 |
| [15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | 0 1 5 0 1 8 9 8 / 1 |
| [16] Անվանումը | «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԱՅԻՆ ԵՎ ՌԱԴԻՈՀԱՂՈՐԴԻՉ ՑԱՆՑ» Փակ բաժնետիրական ընկերություն (ՓԲԸ) |
| [17] Բանկային տվյալները | N |
| [18] Գտնվելու վայրը (բնակության վայրը) | ԵՐԵՎԱՆ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ԹԱՂԱՄԱՍ ՀՈՎՍԵՓՅԱՆ 95 |
| [19] Լրացուցիչ տվյալներ | |

| [20] Ում միջոցով | Անուն, ազգանուն | | |
|---|---|---|---|
| | Լիազորագիր | Համար | |
| | | Ամսաթիվ | |

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկ

| NN Ը/Կ | Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը) | Չափի միավորը | Ընդհանուր ծավալը կամ ժամանակաշրջանը | Միավորի գինը | Զեղչ(%) | Արժեքը |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| 1 | Տրանսֆորմատորի մալուխի վերանորոգման և մոնտաժման աշխատանքներ | հատ | 1 | 200000 | | 200000 |
| Ընդամենը | | | | | | 200000 |

Ծառայություն մատուցող (աշխատանք կատարող)՝ GEVORGYAN GEVORG 2210901014

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

Ծառայություն (աշխատանք) ստացող՝ PETROSYAN BELA 6405650081

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

26/05/2021 14:20:08

27/05/2021 15:33:56